Հավելված
ՀՀ կառավարության 2024 թվականի
մայիսի 8-ի N 676-Ա որոշման

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՆՈՒԿՆԵՐ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՀԱՆՐՕԳՈՒՏ ԾՐԱԳԻՐԸ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- **Կազմակերպության լրիվ անվանում՝** «Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամ (COAF)
- **Կազմակերպահիրավական ձև՝** ոչ առևտրային
- **Կազմակերպության ստեղծման ամսաթիվ՝** 2003թ. հոկտեմբերի 7
- **Կազմակերպության գրանցման վկայականի համար՝** 222.160.00202
- **Գրանցման վայր և տարեթիվ՝** ք. Երևան, 2003թ.
- **Գործունեության իրականացման վայր՝** ՀՀ, ք. Երևան, Մելիք Ադամյան 2/2, Կենտրոն 0010, Երևան
- **Փոստային հասցե՝** 0010
- **Կազմակերպության կապիտալի չափ՝** հիմնադրամը չունի կանոնադրական կապիտալ
- **Նույնականացման ծածկագիր՝** 39098096, ՀՎՀՀ՝ 02569972
- **էլ. հասցե՝** coaf@coaf.org **վեբ կայք՝** **https://www.coaf.org/**
- **Գործադիր տնօրեն՝** Լիանա Ղալթաղչյան, հեռ.՝ 094111177
- **Գլխավոր հաշվապահ՝** Նվարդ Կարապետյան, հեռ.՝ 093275847

2. ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Հիմնադրամի նպատակներն են՝

- նպաստել Հայաստանում երեխաների բարեկեցության ապահովմանը, առողջապահությանը, կրթությանը՝ ընտանիքներին աջակցելու և շրջակա միջավայրի պահպանության միջոցով,
- զբաղվել հիմնադրամների համար չարգելված այլ գործունեությամբ:

Հիմնադրամի խնդիրներն են՝

- ՍՄԱՐԹ նախաձեռնությունների և համապարփակ ռեսուրսների միջոցով հզորացնել Հայաստանի բոլոր մարզերի երեխաներին ու երիտասարդներին,
- բարելավել մարզերի կրթական, առողջապահական և տնտեսական ոլորտները՝ նպաստելով կայուն ու դինամիկ զարգացող համայնքների ստեղծմանը:

3. ՀԱՆՐՕԳՈՒՏ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Ծրագրի ընդհանուր նկարագիրը և իրականացման հիմնական նպատակը

«Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամի ծրագրային մոդելը, որը իրականացվելու է ՀՀ Սյունիքի մարզի Կապան համայնքում (այսուհետ նաև՝ համայնք), ներառում է զուգահեռաբար իրականացվող կրթական, սոցիալական, առողջապահական, սպորտային, տնտեսական, գյուղատնտեսական և ԳՏՃՄ (STEM) միջոցառումներ, ինչպես նաև համայնքների համար կենսական նշանակություն ունեցող ենթակառուցվածքների վերանորոգումներ և բարելավումներ (այսուհետ միասին՝ ծրագիր):

Հիմնադրամի հաջող կիրառված ծրագրային մոդելի առանձնահատկությունն այն է, որ հիմնադրամի ՔՈԱՖ ՍՄԱՐԹ կենտրոնում (ներկայումս գործում է ՀՀ Լոռու մարզում) իրականացվող բազմակողմանի ոչ ֆորմալ կրթական ծրագրերի միջոցով համայնքաբնակ երեխաները հաղորդակից են դարձվում աշխարհին:

Որպես ոչ ֆորմալ կրթական ծրագրի մաս կազմող գերազանցության կենտրոն՝ ՔՈԱՖ ՍՄԱՐԹ-ը ժամանակակից հաղորդակցային ու տեղեկատվական տեխնոլոգիաների, ամառային դպրոցների, գիտահավաքների, տարածաշրջանային քննարկումների և այլ կարևոր միջոցառումների կազմակերպման միջոցով աշխարհի լավագույն մասնագետներին ու ռեֆորմատորներին կապում է բնակավայրերի հետ՝ տարածելով կրթության, առողջապահության, արվեստի, գիտության, շրջակա միջավայրի ու տեխնոլոգիայի բնագավառների առաջատար փորձն ու մեթոդները:

ՔՈԱՖ ՍՄԱՐԹ-ի կրթական ծրագիրը բաղկացած է անգլերենի, ռուսերենի, չինարենի, ֆինանսների, մարքեթինգի, նկարչության, թվային նկարչության, ՎիԱր (VR) ֆիթնեսի, երաժշտական գործիքների, ձայնային ձևավորման, կառավարման, կատարողական արվեստի, ծրագրավորման, մեխանիկայի, ագրոտեխնոլոգիայի, Յոգայի, Պարի, դասընթացներից: Նշված կրթական միջոցառումները իրականացվում են բացառապես անհատույց հիմքերով: Կրթական ծրագիրը ժամանակի ընթացքում վերանայվում և վերագնահատվում է կրթությունն ավելի արդյունավետ

դարձնելու համար: Ուստի, թվարկված բաղադրիչները կարող են փոփոխվել, ընդլայնվել կամ պակասեցվել կախված ժամանակի ընթացքում կրթական ծրագրի վերագնահատման արդյունքներից:

ՀՀ Սյունիքի մարզի Կապան համայնքում ՔՈԱՖ ՍՄԱՐԹ կենտրոնի ստեղծման նպատակն է զարգացնել ՀՀ Սյունիքի մարզի Կապան բազմաբնակավայր համայնքի և հարակից համայնքների երեխաների մտահորիզոնը և կարողությունները՝ ոչ ֆորմալ կրթական ծրագրերի միջոցով:

Համայնքում զուգահեռաբար իրականացվող տնտեսական միջոցառումների նպատակն է ֆինանսական ներդրումների միջոցով զարկ տալ բնակավայրերում տնտեսական զարգացմանը, գործարարների կարողությունների զարգացմանը: Սա իրականացվելու է որպես լրացուցիչ միջոցառում, համապատասխան ֆինանսական միջոցների նախատեսման պարագայում:

Համայնքում սպորտային միջոցառումների նպատակն է համայնքի բնակիչների և «ՔՈԱՖ ՍՄԱՐԹ» կենտրոնի շահառուների առողջ ապրելակերպի խրախուսումը՝ համապատասխան պայմաններ ստեղծելու միջոցով: Նպատակ է դրվելու որպեսզի սպորտային ծրագրերից օգտվեն համայնքի բոլոր երիտասարդները:

Համայնքում գյուղատնտեսական միջոցառումների նպատակն է հաշվի առնելով միջազգային լավագույն փորձը, կիրառել նորարարական լուծումներ և մեթոդներ՝ իրականացնելու գյուղատնտեսական արդյունաբերական տեխնոլոգիաներ մասնագիտական կրթական ծրագրեր, որը նպաստելու է տարածաշրջանի գյուղատնտեսության ոլորտի զարգացմանը և յուրօրինակ մշակույթի հիմք է լինելու՝ խթանելով սերունդների գիտելիքները գյուղատնտեսության ոլորտում: Սա իրականացվելու է որպես լրացուցիչ միջոցառում, համապատասխան ֆինանսական միջոցների նախատեսման պարագայում:

Համայնքում ԳՏՃՄ (STEM) միջոցառումների նպատակն է ստեղծել հնարավորություններ շահառու համայնքների երեխաների համար ծանոթանալու առաջատար լուծումներին և համակարգերին, գիտական, տեխնիկական, ճարտարագիտական և մաթեմատիկայի ոլորտներում: Դրանք նպաստելու են ապագա սերունդների տեխնիկական հմտությունների և գիտելիքների կատարելագործմանը. նրանց առջև բացվելու են նոր հորիզոններ արտադրական և արդյունաբերական ոլորտներում նորարարական լուծումների ներդրման և իրագործման համար:

Համայնքում ենթակառուցվածքների կառուցման, վերանորոգման և բարելավման նպատակն է ստեղծել անհրաժեշտ շինություններ և միջավայր վերը նշված նպատակների իրագործման համար:

Ծրագիրը նախատեսվում է իրականացնել ԵՄ-ից ներգրավված դրամաշնորհային, ինչպես նաև Եվրոպական ներդրումային բանկից ներգրավված վարկային

միջոցների հաշվին: Ուստի, ծրագրի մեկնարկը հնարավոր է լինելու միայն այն դեպքում, երբ համապատասխան ֆինանսական միջոցները ՔՈԱՖ-ի համար կդառնան հասանելի:

Տեղեկատվություն ծրագիրը իրականացնելու մասին

Ծրագրի կրթական մասն իրականացվելու է անմիջականորեն «Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամի կողմից, իսկ մնացած մասերի իրականացման ժամանակ ներգրավելու են տվյալ միջոցառման իրականացման ուղղությամբ մասնագիտացված կազմակերպություններ: Մասնավորապես, ծրագրի նախագծման և շինարարական աշխատանքներն իրականացնելու են համապատասխան լիցենզիա ունեցող կազմակերպությունները:

Ծրագրի գործողության ոլորտը

Ծրագրի իրականացման ոլորտն է համայնքում արտադպրոցական կրթությունը, տնտեսության, սպորտի, գյուղատնտեսության, ԳՏՃՄ (STEM) ուղղության, ենթակառուցվածքների զարգացումը:

Ծրագրի շրջանակում իրականացվելու են հետևյալ միջոցառումները.

Դրամաշնորհային և վարկային միջոցները ՔՈԱՖ-ի համար հասանելի դառնալու օրվանից սկսած 5 տարվա ընթացքում իրականացվելու են ՔՈԱՖ ՍՄԱՐԹ կենտրոնի ստեղծման աշխատանքները: Բարեկարգվելու է կենտրոնի տարածքը և զուգահեռաբար հիմնանորոգվելու են կենտրոնի մասնաշենքերը, կառուցվելու են անհրաժեշտ հարակից տեխնիկական շինությունները: Բարեկարգվելու են կենտրոնի հարակից տարածքները և ճանապարհներն ու դրանց անհրաժեշտ ենթակառուցվածքները:

ՔՈԱՖ ՍՄԱՐԹ կենտրոնի ստեղծումից հետո իրականացվելու են տնտեսական, սպորտային, գյուղատնտեսական և ԳՏՃՄ (STEM) միջոցառումները:

Ծրագրի բյուջեն

Ծրագրի ընդհանուր բյուջեն 5 տարվա համար կազմում է **2,500,000,000 (երկու միլիարդ հինգ հարյուր միլիոն) ՀՀ դրամ**:

Նախատեսված ֆինանսավորման ուղղություններն են՝

- Կապանի ՔՈԱՖ ՍՄԱՐԹ կենտրոնի տարածքի բարեկարգում,

- ՔՈԱՖ ՍՄԱՐԹ կենտրոնի մասնաշենքերի վերակառուցում և շահագործում,
- Ենթակառուցվածքների կառուցում, վերանորոգում և բարելավում,
- Տնտեսական, սպորտային, գյուղատնտեսական և ԳՏՃՄ (STEM) միջոցառումներ:

Ֆինանսավորման աղբյուրները՝

- հիմնադրամի սեփական միջոցներ,
- եվրոպական միության դրամաշնորհներ,
- եվրոպական ներդրումային բանկի վարկ:

Ծրագրի արդյունքը

Ծրագրի արդյունքում Համայնքում կստեղծվեն հասարակական նշանակության կարևոր կառույցներ և կիրականացվեն միջոցառումներ, որոնք կծառայեն համայնքում կրթական, սոցիալական, առողջապահական, սպորտային, տնտեսական, գյուղատնտեսական և ԳՏՃՄ (STEM) ուղղությունների զարգացմանը, ինչպես նաև՝ համայնքի համար կենսական նշանակություն ունեցող ենթակառուցվածքների զարգացմանը: Բազմաթիվ համայնքաբնակ երեխաներ հնարավորություն կունենան ստանալ որակյալ ոչ ֆորմալ կրթություն, իսկ նրանց ընտանիքների անդամները և երիտասարդները՝ ներգրավել տնտեսական, գյուղատնտեսական, սպորտային, ԳՏՃՄ (STEM) միջոցառումներում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

10.05.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ